# ԲԱՆԱՁԵՎԵՐ

## Հ. ՀՐ. ԴԻՎԻԶԻԱՅԻ ՏԱՍԵՐՈՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍԻ

355.23
Z-24

ԵՐԵՎԱՆ
1932

n 1 MAR 2010

ՀՍԽՀ — Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

55·23
Հ-24

# ԲԱՆԱՁԵՎԵՐ

## Հ. ՀՐ. ԴԻՎԻԶԻԱՅԻ X ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍԻ

(1932 թ. ՀՈՒՆՎԱՐ)

30103

ՀՍԽՀ ... ССРА

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՐ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ 1932

26 FEB 2014

41.275

Резолюции Десятой партконференции
Армянской стр. Дивизии

Պետհրատի տպարան
Գլավլիտ 7369 (բ)
Պատվեր 830
Տիրաժ 1500

# ԲԱՆԱՁԵՎ

## Հ. ՀՐ. ԴԻՎԻԶԻԱՅԻ ՏԱՍԵՐՈՐԴ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ

Լսելով դիվիզիայի Քաղբաժնի պետ ընկ. ՎԱՐԴԱՆՈՎԻ զեկուցումը՝ Քաղբաժնի աշխատանքների մասին և դիվիզիայի հրամանատար-կոմիսար ընկ. ԱԹՈՅԱՆԻ զեկուցումը՝ դիվիզիայի մարտական պատրաստության մասին, դիվիզիայի 10-րդ կուսակցական կոնֆերանսը Քաղբաժնի քաղաքական գիծը համարում է ճիշտ և հավանություն է տալիս գործնական աշխատանքին:

Դիվիզիայի կուսակցական կազմակերպությունը նախընթաց շրջանում Քաղբաժնի բոլշևիկյան ղեկավարությամբ խոշոր աշխատանք է տարել կուսակցության գլխավոր գծի համար իր մղած պայքարում՝ ընդդեմ աջ թեքման, վորպես գլխավոր վտանգի, աջ-«ձախ» խոտորումների, հակահեղափոխական տրոցկիզմի թեորիայի և պրակտիկայի դեմ, հաշտվողականների և յերկերեսանիների դեմ:

Կոնֆերանսը նշում է, վոր խոշոր նվաճումներ են ձեռք բերվել Դիվիզիայի Քաղբաժնի ամբողջ կուսկազմակերպության աշխատանքում՝ յերկու ճակատի վրա մղած պայքարում, ապա-

*յին հարցի ասպարեզում, մեծապետական շովինիզմի,—վորպես գլխավոր վտանգի,—դեմ, տեղական նացիոնալիզմի, հակահեղափոխական կուսակցության՝ Դաշնակցության իդեոլոգիայի և պրակտիկայի դեմ և նրա ագենտուրայի հայկական նացիոնալ-ուկլոնիզմի դեմ։*

Տասներորդ կուսկոնֆերանսն առանձնապես նշում է Քաղբաժնի և կուսկազմակերպությունների դասակարգային բարձր զգոնությունը, անդուլ և անդադար պայքարը մարտիկների ու պետկազմի մոբիլիզացիայի գործում, վճռական պայքար մղելու համար դաշնակների այն փորձերի դեմ, վորոնք աշխատում են ազդեցություն գործել զորանոցի վրա։

*Մենք ունենք կոլտնտեսական կարգի խոշոր աճում, վորը ներկայումս հասել է գյուղում տնտեսության հետ կապ ունեցող կարմիր բանակայինների և կրտսեր հրամանատարների 46 տոկոսին, կուսակցական, կոմյերիտական հագեցվածությունը հասել է 74 տոկոսի, լավորեն ծավալվել են սոցմրցակցությունն ու հարվածայնությունը կարմիր բանակայինների ու պետերի կազմի մեջ։*

*Նախընթաց տարում դիվիզիայի մարտական ու քաղաքական պատրաստության ասպարեզում ունենք նվաճումներ տակտիկական գծով, ֆիզիկական պատրաստության, հրամանատարական ուսուցման, հաստատակամ հրամանատար կոփելու, զենքն ուսումնասիրելու, խնամելու և պահելու գծով, դիվիզիայի զորամասերի մարտական պատրաստության այդ բնագավառների քաղաքականացման կոնկրետացման գծով։*

Հրամանատարական քաղաքական կադրի մասին ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի վորոշումները և Միության Հեղափոխական Ռազմական Խորհրդի վորոշումների հիման վրա դիվիզիայի կուսկազմակերպությունը մեծ աշխատանք է տարել պետկազմի կադրերի միաձուլության գործում, համախմբելով նրանց կուսակցության գլխավոր գծի շուրջը, նոր հրամանատարներ-միահրամանատարներ պատրաստելու գործում, պետկազմի ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական պատրաստությունը բարձրացնելու գործում։

*Կոնֆերանսն ամբողջությամբ և լիովին հավանություն է տալիս Քաղբաժնի վերցրած վճռական կուրսին՝ առաջ քաշելու բանվոր հրամանատարներից ու քաղաշխատողներից ղեկավար ու կուսակցական աշխատանքի համար և կուրս է վերցրել էլ ավելի մեծացնելու կուսակցական ու բանվորա-գյուղացիական շերտը հրամանատարական կազմում։ Բանվորական շերտը դիվիզիայի ղեկավար քաղկազմում հասել է 85 տոկոսի։ Քաղաքացիական պատերազմի մասնակիցների թիվը՝ 75 տոկոսի։ Ղեկավար հրամանատարական կազմում կուսշերտը՝ 81 տոկոսի։*

*Կոնֆերանսն առանձնապես նշում է ազգային փոքրամասնությունների ստորաբաժանումների (թուրքական վաշտ, քրդական վաշտ, ռուսական դասակ) ռազմաքաղաքական պատրաստության բնագավառում ունեցած նվաճումները, վորը հանդիսանում է լենինյան ազգային քաղաքականության ճիշտ անցկացման և ինտերնացիոնալ միաձուլության։ Դրա հետ միասին կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում հետագայում նույնպես ուժեղացնել քաղպարապմունքների, կուսակցական կազ-*

մակերպությունների և պետկազմի ուշադրությունն ազգային փոքրամասնություններից բաղկացած ստորաբաժանումների դրության, նրանց ռազմաքաղաքական պատրաստության վրա:

Յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման հսկայական հաջողությունների հիման վրա աճել ու զարգացել է լայն անկուսակցական կարմիր բանակային մասսաների և պետերի կազմի վստահությունը դեպի կուսակցական քաղաքականությունը, վորն իր պայծառ արտացոլումն է գտնում կուսակցության և կոմյերիտմիության մեջ մտնելու խոշոր ձգտման և դիվիզիայի կուսկազմակերպության շուրջը ե՛լ ավելի սերտ համախմբման մեջ:

Քաղաքական պարապմունքները դեռևս հիմնական լծակ չեն դարձել կարմիր բանակայինների ու պետկազմի մեջ մեր կուսակցության գլխավոր գծի պրոպագանդի համար: Չնայած քաղաքական պարապմունքների բնագավառում ունեցած վորոշ նվաճումներին, մենք դեռևս վճռականորեն և պատշաճ կերպով չենք վերակառուցել աշխատանքը՝ 18 և 20 հրամանների իրացման, ղեկավար մարմինների դիրեկտիվների կենսագործման ասպարեզում:

Կոնֆերանսն ընդգծում է, վոր չնայած կուսակցականների և կոմյերիտականների կարգապահության և որինակելիության բարձրացման ասպարեզում նախընթաց տարում ունեցած վորոշ նվաճումներին, կարգապահական զանցանքների փաստերն ընթացիկ ուսումնական տարվա սկզբից խոսում են այն մասին, վոր կուսկազմակերպությունների կողմից բավականաչափ ուշադրություն չի ցույց տրվել հրամատարությամբ զինվորական կարգապահությունը բարձրացնելու, «ԱՌԱՆՑ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԶԱՆՑԱՆՔԻ ԶՈՐԱՄԱՍ» լոզունգի իրացման գործում՝ Միության Հեղափոխական Ռազմական Խորհրդի հրամանի պահանջների և դրույթների հիման վրա:

Յելնելով այդ հիմնական թերություններից, կոնֆերանսը սրում է կուսկազմակերպության ուշադրությունը հետևյալ խնդիրների վրա.—

Կուսակցական կազմակերպությունները հետագայում պետք է վճռական պայքար ծավալեն յերկու ճակատի վրա՝ կուսակցության գլխավոր գծի համար, գլխավոր վտանգ հանդիսացող աջ թեքման դեմ, աջ-«ձախ» խառնուրդների դեմ, նեխված լիբերալիզմի դեմ՝ ազգային հարցում թե՛ թեորիայում և թե՛ պրակտիկայում:

Ընկ. Ստալինի նամակը մեր առաջ խնդիր է դնում ավելի ուժեղացնել կուսակցական կազմակերպությունների աչալրջությունն ու անհաշտությունը կուսակցության գծից բոլոր թեքումների դեմ մղվող պայքարում՝ սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում, վճռական պայքար մղել ինչպես թեորիայում, այնպես և պրակտիկայում բանակային շինարարության ռազմաքաղաքական պրոբլեմներն ուսումնասիրելու և մշակելու ասպարեզում, ապագա պատերազմների բնույթի հարցերն ուսումնասիրելու գործում, և այստեղից բղխող այն խնդիրների կատարման գործում, վոր վերաբերում են Կարմիր բանակի և Միության պաշտպանունակության մարտական հզորությունը բարձրացնելուն:

Առանձին ոպորտունիստական տարրերի և նեխ-

ված լիբերալների կողմից ամեն տեսակ փորձերը՝ վերանայելու մեր կուսակցության լենինյան գնահատականը դաշնակցական կուսակցության վորպես հայկական բուրժուազիայի հակահեղափոխական կուսակցություն լինելու մասին— պետք է հանդիպեն կործանիչ հակահարվածի դիվիզիայի վողջ կուսկազմակերպության կողմից:

Պետկազմի կադրերի մարքս-լենինյան պատրաստության բարձրացման անհրաժեշտությունը՝ Միության Հեղափոխական Ռազմական Խորհրդի պահանջների հիման վրա, ընկ. Ստալինի նամակի իրացման հիման վրա, մեր կուսակցական կազմակերպության և ամբողջ Կարմիր բանակի կուսակցական կազմակերպությունների համար մարտական խնդիր է հանդիսանում, վորն իր լուծումն է պահանջում ընթացիկ ուսումնական տարում: Դրա հետ միասին քաղաշխատողները և կուսակցական կազմակերպությունները վճռականորեն պետք է գործի կոչեն՝ ոգնություն ցույց տալու համար հրամանատարությանը՝ բարձրացնելու դիվիզիայի ամբողջ պետկազմի ռազմատեխնիկական և ռազմաքաղաքական վորակը:

## ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Դիվիզիայի բոլոր զորամասերում հրամանատարական ուսուցման նկատմամբ անցյալ տարում ունեցել ենք վորոշ նվաճումներ — հրամանատարական ուսուցման՝ գործն ավելի լավ էր դրված 2-րդ, 3-րդ և հրետանական գնդերում: Վատ էր դրված առաջին գնդում, վորտեղ հրամանատարական ուսուցման ասպարեզում թույլ ղեկավարության շնորհիվ պետկազմի պատրաստության գործում



մենք ունեցանք ինքնահոս: Թերություններն են՝

Յուրացման հաշվառման բացակայությունը, կովի տեխնիկական միջոցների անբավարար ոգտագործումը տեխնիկական պարապմունքների ժամանակ, ինչպես քարտեզների վրա, նույնպես և տեղանքում: Զորամասի ու ստորաբաժանման սպառազինման մեջ գտնվող կովի տեխնիկական միջոցների տակտիկական հատկությունների անբավարար իմանալը: Կրտսեր պետկազմին ցույց է տրվել և ցույց է տրվում անբավարար ոգնություն, նրա ռազմաքաղաքական վորակը բարձրացնելու գործում:

Հրամանատարական ուսուցման նյութական անբավարար ապահովումը, հրամանատարական ուսուցման սենյակների վերասարքավորումը 2-րդ, 3-րդ և №-րդ գնդերում: Այդ կողմից գործն ավելի լավ է դրված հրետանային և առաջին գնդերում: Անբավարար է ծավալված հրամանատարական ուսուցման մեջ սոցմրցակցությունը, բացակայում է որինակելիությունն ու ղեկավար դերը կուս. պետկազմի կողմից, թույլ են սպասարկում գրադարանները, թույլ է կուսբյուրոների սեկտորների աշխատանքը պետկազմի մեջ:

Պետկազմի ռազմատեխնիկական, ռազմաքաղաքական և մարքս-լենինյան պատրաստության բարձրացման անհրաժեշտությունը նշանավոր չափով դեմ է առնում նրա ընդհանուր կրթական պատրաստության բարձրացմանը՝ ռուսերեն լեզուն ուսումնասիրելուն: Գոյություն ունեցող դրականությունը ռազմատեխնիկական, ռազմաքաղաքական առարկաների վերաբերյալ և առաջին աղբյուրների (Մարքս, Էնգելս, Լենին, Ստա—

լին) նկատմամբ հիմնականում հրապարակվում են և կան ռուսերեն լեզվով, որոն առանձնապես անհրաժեշտ է դիվիզիայի պետակազմի որակը բարձրացնելու համար, վերոհիշյալ հարցերն ուսումնասիրելիս:

Կուսկոնֆերանսն անհրաժեշտ է գտնում ամենամոտիկ ապագայում հրայցնել Միության Հեղափոխական Ռազմական Խորհրդի և ԿԿԲ-ի Քաղվարչության վերջին ցուցումներն ու հրամաններ ը, նրանց հիման վրա աշխատանք ծավալել՝ կազմակերպելու ընդհանուր կրթական բնույթի համապատասխան խմբակներ և ռուսերեն լեզուն ուսումնասիրելու խմբակներ:

Կուսկոնֆերանսն անհրաժեշտ է գտնում ուժեղացնել կուսկազմակերպությունների և պետկազմի ուշադրությունը դեպի մարտիկների և կրտսեր հրամկազմի ամենօրյա կարիքները, բարձրացնելով հոգատարությունը ստորաբաժանման կենցաղի և նյութական դրության նկատմամբ:

Կուսակցական կազմակերպությունները հրամանատարական ուսուցման քաղապահովման գործում, կոնկրետացնելով իրենց աշխատանքը, պետք է առաջին հերթին ձեռք բերեն կուսակցական հրամանատարների և քաղաշխատողների օրինակելիություն: Ինքնահոսի տարրերը, դիմազրկությունը և անպատասխանատվությունը վճռականորեն պետք է վերացվեն, առաջին հերթին՝ հրամանատարության հատուկ ղեկավարությամբ և քաղպարապատների ու կուսկազմակերպությունների դեպի մարտական պատրաստության այդ կարևորագույն բնագավառն ուղղված ուշադրության ուժեղացմամբ:



«ՎՈՉ ԲՈԼՈՐ ԿՈՒՍԲՋԻՋՆԵՐՆ ԵՆ ԻՐԵՆՑ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԴՐԵԼ ՀՐԱՄԱՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ, ԱՄԵՆՈՐՅԱ ԱԿՏԻՎ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՄԱՏԱՐԻՆ՝ ՆՐԱ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ»:

ԱՅԴ ՂԵԿԱՎԱՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՅԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՐԵԿՏԻՎՆԵՐԸ ՅԵՎ ԲՋԻՋՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ 3-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԿԱՏԱՐՎԵՆ:

«ՀՐԱՄԱՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ՊԵՏՔ Ե ԱՄԵՆ ԿԵՐՊ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏՐՎԻ, ՅԵՎ ԱՅՆ ԲՈԼՈՐԸ, ԻՆՉ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԵՆ ՆՐԱՆ, ՊԵՏՔ Ե ՎՃՌԱԿԱՆՈՐԵՆ ՎԵՐԱՑՎԵՆ»:

## ԶՈՐՔԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Կան նվաճումներ ինչպես մարտիկների անհատական պատրաստության, նրանց դիմացկունության, շարժունության և կարգապահության, այնպես և ստորաբաժանումների տակտիկական պատրաստության ասպարեզում: Անցկացված միակողմ տակտիկական պարապմունքները, ջոկատային պարապմունքները, բանակային մանյովրներին մասնակցությունը ցույց տվեցին մարտիկների և պետկազմի կողմից բարձր դիմացկունություն, լեռնային ռելյեֆը հաղթահարելու, կրակն ու մանյովրը զուգակցելու հմտություն: Տակտիկական պարապմունքների քաղապահովման

մեջ դիվիզիայի բոլոր զորամասերում կան նվաճումներ։ Դաշտ դուրս գալն ու բոլոր պարապմունքները կոնկրետ կերպով քաղաքականապես ապահովված են յեղել ինչպես ընդհանուր քաղաքական հարցերն իրացնելու տեսակետից, այնպես էլ մարտի պրոցեսում առանձին ետապների կոնկրետ խնդիրների գծով։

Զորքերի ամբողջ տակտիկական պատրաստությունը պետք է կառուցել, հաշվի առնելով լեռներում գործողությունների առանձնահատկությունները և համապատասխանորեն կառուցել զորամասերի գործողությունների քաղաքական ապահովումը լեռնային պայմաններում, օգտագործելով արդեն կուտակված քաղաշխատանքի վորոշ փորձը լեռնային պայմաններում և 1931 թ. ԿԿԲ մանյովրների հանրագումարների նյութերը։

## ՀՐԱՁԳԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Հրաձգային թույլ պատրաստության պատճառներն են՝ պետկազմի վորոշ մասի թույլ պատրաստությունը, հրաձգությունների նոր կուրսի յուրացման և կիրառման անբավարար մշակումը, ձգտումը դեպի փամփուշտների ավելի մեծ քանակով ծախսումն՝ փոխանակ մարտիկի կոնկրետ, մեթոդիկ, անհատականացված ուսուցման, կոմսպետկազմի մի մասի օրինակելիության բացակայություն հրաձգության մեջ, սոցմրցակցության անբավարար ծավալում, հրաձգային պատրաստության և հրաձգային մարզանքի շուրջը մասսայական աշխատանքի թույլ դրումը։



## ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Դիվիզիայի զորամասերն զգալի հաջողություններ են ձեռք բերել ֆիզիկական պատրաստության ասպարեզում։ Դիվիզիան ամբողջովին վերցրած ստացավ «լավ» գնահատական։ Դիվիզիայի զորամասերը կատարում են լեռնային մեծ և դժվարին յերթեր և փոխադրումներ՝ առանց մի հոգի անգամ յետ մնացող ունենալու։ Պետկազմի ֆիզիկական պատրաստությունը բարձրացել է, սակայն դեռևս հեռու յե այն պահանջներից, վորոնք առաջադրվում են հրամանատարին և քաղաշխատողին՝ ստորաբաժանումները ղեկավարելու համար։

### ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.—

Թույլ հիմքերի վրա յե դրված մասսայական աշխատանքը ֆիզիկական պատրաստության և սպորտի ասպարեզում։ Տուրիստական շարժման գործում ունենք մեծ նվաճումներ, բայց նա դեռ մասսայական կազմակերպություն չի դարձել. դեռ մինչև այժմ էլ թույլ է պետկազմի ֆիզիկական պատրաստությունը, և կարմիր բանակային հասարակայնության ուշադրությունը բավականաչափ մոբիլիզացիայի չի յենթարկված ֆիզիկական պատրաստության, վորպես զորամասի ստորաբաժանումների մարտական պատրաստության տարրերից մեկի, խնդիրների շուրջը։

## ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Դիվիզիայի զորամասերում վորոշ նվաճումներ ունենք կարգապահության բարձրացման բնագավառում: Սկսած առաջին յեռամսյակից մինչև 4-րդ յեռամսյակի վերջը կարգապահական զանցանքների թիվն աստիճանաբար, տեղ-տեղ դանդաղորեն, նվազել է: Դիվիզիայի մարտիկների ամբողջ թվից զանցանք չի կատարել՝ շարքայինների՝ 94 տոկոսը, կրտսեր հրամկազմի՝ 91,6 տոկոսը, միջին պետկազմի՝ 82 տոկոսը, իսկ այդ բոլոր խմբակներում միջին հաշվով 90 տոկոս:

Չորրորդ յեռամսյակում ամբողջ դիվիզիայում կարգապահության զանցանք չեն կատարել միմիայն 8 բջիջ և 9 առանձին ստորաբաժանում: Թե՛ անցյալ տարի և թե՛ մանավանդ ընթացիկ տարվա սկզբին կարգապահության վիճակը ցույց տվող այդ թվերն ազդարարում են կարգապահության ասպարեզում գոյություն ունեցող ճեղքվածքների մասին, վկայում են, վոր կուսակցականները, կոմյերիտականները, պետկազմը և մանավանդ կուսակցական պետկազմը, դեռևս որինակելի չեն:

Այդ թվերի կողքով չպետք է անցնի վոչ մի կուսակցական և կոմյերիտական բջիջ, վոչ մի հրամատար և քաղաշխատող: Կովկասյան Կարմրադրոշ Բանակի Հեղափոխական Ռազմական Խորհրդի այդ վորոշման իրականացումը հանդիսանում է մեր ամբողջ դիվիզիայի կուսկազմակերպության և պետկազմի անհետաձգելի խնդիրը:

«ՇԱՏ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԵՌՅԵՎՍ ՉԵՆ ՍՈՎՈՐԵԼ ԻՆՉՊԵՍ ՀԱՐԿՆ Է ԲՈԼՇԵՎԻԿՈՐԵՆ ՊԱՅՔԱՐ ՄՂԵԼ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, «ԱՌԱՆՑ ՎՈՐՅԵՎԵ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԶԱՆՑԱՆՔԻ, ՈՐԻՆԱԿԵԼԻ ԶՈՐԱՄԱՍԻ ՅԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ» ՀԱՄԱՐ»:

Բջիջների քարտուղարների խորհրդակցության վորոշումներից բերված այս կետը պետք է կենտրոնական խնդիրներից մեկը հանդիսանա մարտական պատրաստության բարձրացնելու գործում:

## ԶՈՐԱԿՈՉԸ

Հայկոմկուսի (բ) Կենտկոմի և Ժողկոմխորհի բոլշևիկյան ղեկավարությամբ, անողոք պայքար մղելով դասակարգային թշնամու դեմ, զորակոչի վրա ազդելու դաշնակների փորձերի դեմ, ամեն գույնի ոպորտունիզմի դեմ՝ թե՛ թեորիայում և թե՛ պրակտիկայում, կուսակցության գլխավոր գծի շուրջը զորակոչիկների հիմնական մասսաների համախմբվածության հիման վրա 1909 թ. զորակոչն անցավ համեմատաբար բարձր վորակային ցուցանիշներով (մեծ ուշադրություն սոցդասակարգային ընտրությանը, գրագիտության մեծ տոկոս և այլն):

1910 թ. ծնվածների զորակոչի աշխատանքներում կոնֆերանսը հիմնական խնդիր է համարում — դիվիզիայի ապահովումը բանվորական և կուս-կոմյերիտական է՛լ ավելի բարձր շերտով. Թույլ չտալ բանակի շարքերը սոցիալապես խորթ տարրերին, մեծ ուշադրություն ազգային փոք-

*ռամասնությունների (թուրքեր, քրդեր և այլն) քաղաքացիների զորակոչի հարցերին:*

## ՑԵՐԿՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

*Ցերկրային զորամասերին օգնության և կոնկրետ ղեկավարություն ցույց տալու գործում կուսկոնֆերանսն անցյալ տարվա հետ համեմատած արձանագրում է նկատելի նվաճումներ: Դրա հետ միասին կոնֆերանսը նշում է, որ ցերկրային զորամասերի օգնության և ղեկավարության մասին 9-րդ զինկուսկոնֆերանսի վորոշումները դեռ լրիվին կենսագործված չեն, որ դեռևս թույլ է ընթանում միջհավաքային աշխատանքը, վորի համար անհրաժեշտ է՝*

*ա) ուժեղացնել միջհավաքային աշխատանքները, նրա ապահովման համար լայն ծավալել մարտական պատրաստության խմբակների, ռազմական անկյունների աշխատանքները և մասսայական աշխատանքները.*

*բ) միջհավաքային աշխատանքների հարցերը սիստեմատիկորեն լուսաբանել «Կարմիր Զինվոռում».*

*գ) շրջանային կենտրոններում գումարել փոփոխիկների ակտիվի խորհրդակցություններ, սիստեմատիկորեն մեկնել շրջանները, դրանով իսկ ուժեղացնելով կենտրոնի ղեկավարությունը փոփոխիկ կազմի նկատմամբ.*

*դ) ուժեղացնել փոփոխիկների կրտսեր հրամկազմի պատրաստությունը՝ կազմակերպելով առանձին կարճատև հավաքներ:*



*Կոնֆերանսը գտնում է, որ ցերկրային զորամասերի համալրման շրջաններում թույլ է տեղական կուսակցական, խորհրդային և պրոֆմիութենական մարմինների մասնակցությունը միջհավաքային աշխատանքներին: Անհրաժեշտ է հարցը դնել բարձր կուսակցական մարմինների առաջ, տեղական ղեկավար աշխատողների հետ միասին խորհրդակցություններ գումարել, տալ կոնկրետ դիրեկտիվներ և դրանով իսկ ուժեղացնել նրանց կոնկրետ օգնությունը միջհավաքային աշխատանքներին:*

1007 / 30/03

## ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

*Կուսակցական քաղաքական աշխատանքի պլանավորման և զորամասերի հրամանատարության պլանների միջև կապ հաստատելու ասպարեզում ունենք վորոշ նվաճումներ: Ռեգլամենտով կատարվող աշխատանքի անհրաժեշտությունը գիտակցել են և գործադրել են թե՛ քաղապարատը և թե՛ պետկազմը: Սակայն դեռևս ամեն ինչ չի արված արմատապես վերակառուցելու աշխատանքները պլանավորման տեսանկյունով և բջիջների քարտուղարների 3-րդ համաբանակային խորհրդակցության ցուցումների համաձայն:*

*Այդ ասպարեզում գոյություն ունեցող թերությունները հետևյալներն են՝ կուսբյուրոյի և բջիջի միջև [illegible] չկա պլանները կազմելու [illegible] դնելից, կոլեկտիվներ[illegible] բջիջների [illegible]ուրոները, վորպես կանոն, ա[illegible]ական պլանները չեն կազմում, այլ բավականան[illegible]ուր միացված,*

ՀԱՅԿ. ՍՍՀ [illegible] Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

որացուցային պլանով: Կուսակցական և կոմյերիտական աշխատանքի պլանները բավականաչափ համաձայնեցված չեն հրամանատարության զորամասերի և ստորաբաժանումների պլանների հետ՝ ժամկետների և ժամանակի բնագավառում:

Անհրաժեշտ է վճռաբար կանոնավորել ամբողջ աշխատանքը՝ բջիջների քարտուղարների վորոշումների համաձայն, ուժեղացնել պլանների կատարման վերահսկողությունը, նկատի ունենալով, վոր անհրաժեշտ է չերտավորված ղեկավարություն հաստատել և լրիվ համաձայնեցնել բոլոր պլանները զորամասերում և ստորաբաժանումներում:

## ԿՈՒՍԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԵՎ ԲՋԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Կոնֆերանսը մատնանշում է, վոր վորոշ նվաճումներ են ձեռք բերվել կուսբյուրոների և բջիջների աշխատանքների վերակառուցման ասպարեզում: Ուժեղացել և բարելավվել է կուսբյուրոների և բջիջների կենդանի ղեկավարությունը: Չնայած այդ առաջադիմության, մինչև այժմ էլ չի կատարվել այն վերակառուցումը, վորը պահանջում են բջիջների քարտուղարների 3-րդ խորհրդակցության վորոշումները: Մեր թերությունները հետևյալներն են՝ թույլ են, տեղ-տեղ անգործունեության են մատնված կուսբյուրոների սեկտորները: Վոչ բոլոր բջիջներն են ընդհուպ մոտեցել ստորաբաժանումների կենցաղին ու աշխատանքին մասնակցելու հարցին. կուսակտիվի և թեկնածուական կազմի հետ սիստեմատիկ աշխատանք չի կատարվել, պարտականությունները վորոշակի չեն բաշխվել բյուրոյի անդամների և կուսակցության անդամների միջև: Կուսբյուրոները և բջիջների նախագահությունները բավարար չափով չեն ղեկավարում, իսկ տեղ-տեղ թույլ են ղեկավարում Կոմյերիտմիության աշխատանքը:

Անհրաժեշտ է հետագայում չերտավորել ղեկավարությունը, վորոշելով կուսակցության յուրաքանչյուր անդամի պարտականությունները: Անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունը, ղեկավարությունը և ցուցադրումը բջիջների և կուսակցության առանձին անդամների աշխատանքում: Բարելավել կուսբյուրոների և բջիջների նախագահությունների կենդանի ղեկավարության սիստեմը, ուժեղացնել բջիջների ուշադրությունը դեպի զորանոցի քաղաքականբարոյական վիճակի հարցերը, նրա քաղաքական տրամադրությունների կարգավորման հարցերը: Անհրաժեշտ է վերջնականապես ձևակերպել շտաբային բջիջները, վերակառուցելով վերջիններիս աշխատանքը համաձայն վերադաս քաղօրգանների պահանջների, գործադրելով այն զորամասերի այն փորձը, վոր լուսաբանվում է «Կրասնայա Զվեզդա» թերթում շտաբային կարգի խնդիրների տեսակետից, այն հարցերի տեսակետից, վորոնք կապված են շտաբների կառավարման ու աշխատանքի վերաբերյալ Ռազմական Հեղափոխական Խորհրդի առաջադրած պահանջների հետ:

## ՀԱՇՎԱՌՈՒՄ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ

Քաղաքական-բարոյական վիճակն ուսումնասիրելու և կարգավորելու կարևորությունն ու անհրաժեշտությունը հիմնականում գիտակցել են բոլոր կուսկազմակերպություններն ու պետկազմը: Սակայն քաղաքական-բարոյական վիճակի խնդիրների գործնական լուծման և կարգավորման պրակտիկայում մինչև այժմ ել սխալներ են կատարում, տեղ-տեղ լուրջ վերաբերմունք ցույց չի տրվում այն վորոշումների իրականացմանը, վորոնք ընդունել են ՊՈԽԲ-ին կից ինֆորմացիայի շուրջը տեղի ունեցած խորհրդակցությունը:

Մինչև այժմ ել մենք չենք կարողացել ձևակերպում և համաձայնեցրած աշխատանք մտցնել ինֆորմացիոն այն ակտիվի մեջ, վորը պարզորոշ կերպով ըմբռնի իր խնդիրները և կոնկրետ պարտականությունները: Այդ պատճառով կաղում է, տեղ-տեղ բացակայում է քաղաքական ինֆորմացիան, վորն անհրաժեշտ է քաղաքական-բարոյական կայուն վիճակ ստեղծելու համար:

## ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՎԻՃԱԿԸ

Կոնֆերանսը մատնանշում է կոլտնտեսական խավի աճումը զորանոցում: Ներկայումս կոլտնտեսականների թիվը, համեմատած գյուղի հետ, կազմում է 46 տոկոս: Վերջին ժամանակներս, մանավանդ զորացրումից հետո զորանոցում թու-



լացել է կոլտնտեսական պրոպագանդը: Նորակոչիկների զորանոց գալը վորոշ չափով աշխուժացրեց կոլտնտեսական պրոպագանդը, սակայն գոյություն ունեցող կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նվաճումներն ու փորձը բավականաչափ չի ոգտագործվում և չի մասսայականացվում՝ ծավալելու համար կոլտնտեսական պրոպագանդը, նպատակ դնելով, վոր զորանոցը ներգործի գյուղի վրա բացասական, հակակոլտնտեսական տրամադրությունները վերացնելու, կոլտնտեսությունները կազմակերպչորեն և տնտեսապես ամրացնելու խնդրում: Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում կոլտնտեսական համապատասխան որգանների միջոցով պարբերաբար լուսաբանել առանձին շրջաններում կատարվող կոլտնտեսական աշխատանքի վիճակը, ոգտագործելով կոլտնտեսություններում կատարված աշխատանքի բոլոր որինակները՝ կոլտնտեսական պրոպագանդն ե՛լ ավելի ծավալելու համար և այդ հիման վրա հակակոլտնտեսական տրամադրությունները վերացնելու նպատակով, վճռական հակահարված կազմակերպելով դաշնակ-կուլակային ագիտացիայի դեմ:

## ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ

ՊՈԽԲ-ի № 18 և 20 հրամանները հիմնականում ուսումնասիրվել են: Դիվիզիայի Քաղբաժնի կատարած հետագա հետազոտումներն ու ստուգումները ցույց տվին, վոր մինչև այժմ ել արմատական վերակառուցում չի կատարվել այդ հրամանների իրականացման ասպարեզում:

Խմբակավարները բավականաչափ պատրաստված չեն գալիս քաղպարապմունքներին: Կաղում է պարապմունքների մեթոդիկան: Տեղ-տեղ քաղպարապմունքները հին ձևով վերածվում են տաղտկալի դասախոսությունների: Քաղպարապմունքների բովանդակությունը պատշաճ բարձրության վրա չի դրված. կան դասակարգային գծի խեղաթյուրման այլանդակ փաստեր: Թույլ է ծավալվում, իսկ տեղ-տեղ նաև բացակայում է սոցմրցումը. քաղղեկները և խմբակավարները բավականաչափ ղեկավարություն չեն ցուցաբերում պարապմունքներին: Պարապմունքների յուրացումը կուսակցականների և կոմյերիտականների կողմից տակավին չի համապատասխանում ՊՈՒԲ-ի դիրեկտիվների պահանջներին: Կարմիր բանակայինների կուսակցական, կոմյերիտական մասն առայժմ դեռ քիչ է առաջ ընկնում յուրացմամբ, իսկ տեղ-տեղ չի տարբերվում մյուս անկուսակցական կարմիր բանակային մասսայից:

Ստորին մամուլը բավականաչափ չի լուսաբանում դասակարգային գծի խեղաթյուրման և դիմազրկության փաստերը և քաղպարապմունքների վատ դրվածքը: Քաղպարապմունքների հարցերը բավականաչափ չեն լուսաբանվում նաև «Կարմիր Զինվորի» էջերում:

Անհրաժեշտ է կուսակցական պատասխանատվության կանչել քաղպարապմունքների ժամանակ դասակարգային գիծը խեղաթյուրող խմբակավարներին: Պետք է բարձրացնել հրամանատարների և քաղաշխատողների պատասխանատվությունը՝ քաղպարապմունքների վիճակի համար, բարելավել կարմիր բանակայինների ինքնապատրաստման պայմանները և ամեն կերպ օգնել ինքնապատրաստումը ղեկավարող կրտսեր հրամկազմին: Ավելի լայն ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը, վճռաբար բարձրացնել սեմինարներում խմբակավարների քաղպարապմունքի որակը և ուժեղացնել զորամասերի քաղաղարանների և կուսկազմակերպությունների ղեկավարությունը: Պարբերաբար լսել խմբակավարների և քաղղեկների զեկուցումները՝ քաղպարապմունքների ընթացքի մասին բջիջների և զորամասերի կուսբյուրոների ժողովներում, համապատասխան օգնություն ցույց տալով խմբակավարներին՝ քաղպարապմունքների դրվածքը և ընթացքը բարելավելու գործում: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի դրություն, վորպեսզի քաղաքական պարապմունքները կարևորագույն լծակ դառնան՝ մասսայականացնելու կուսակցության հիմնական գիծը՝ ընկ. Ստալինի նամակում առաջադրված նոր խնդիրների տեսակետից:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Կուսակցական լուսավորության ցանցը դիվիզիայի մասերում հիմնականում ծավալվել է ժամանակին: Կուսակցական կազմակերպությունների վոչ բոլոր օղակներն են բավականաչափ լուրջ վերաբերմունք ցույց տալիս քաղպարապմունքներին և կուսլուսավորությանը: Դասակարգային գծի խեղաթյուրման փաստեր կան նաև կուսլուսավորության ասպարեզում:

Երևանի կայազորի պետկազմը հիմնակա-

նում ընդգրկված է լենինիզմի խմբակներում, յերեկոյան կուսդպրոցներում և կոմհամալսարաններում։ Պետկազմը ցույց է տալիս մեծ հետաքրքրություն. Նրա հիմնական մասում ցանկություն կա ստանալ անհրաժեշտ գիտելիքներ և բարձրացնել իր պատրաստությունը։ Սակայն թե՛ սկզբնական ցանցում և թե՛ բարձր տիպի խմբակներում ուսանողների անբավարար ինքնապատրաստումը պարապմունքների համար, ազդում է պարապմունքների վորակի և արդյունավետության վրա։

Չբավականանալով քաղաքական ընդգրկումով, պետք է ծանրանալ պարապմունքների վորակի վրա, նախապես մշակելով համապատասխան նյութը՝ հերթական պարապմունքների համար։ Անհրաժեշտ է բարձրացնել նաև կուսլուսավորության ղեկավարների հրահանգման վորակը։ Պետք է լենինիզմի յերեկոյան դպրոցների և կոմհամալսարանների խմբակների համար հատկացնել անհրաժեշտ գրականություն, գլխավորապես հիմնական աղբյուրներից՝ Մարքսը, Էնգելսը, Լենինը և Ստալինը։ Կուսլուսավորության պարապմունքի ժամանակ հարցերը մշակելիս, անհրաժեշտ է վերջինները կապել մարտական պատրաստության խնդիրների հետ։

Միութենական լուսավորության գծով պետք է առանձնապես խորն ուսումնասիրել ընկ. ՊՈՍՏԻՇԵՎԻ ճառը, կապելով ճառի հիմնական դրույթները մարտական պատրաստության խնդիրների և բանակում կոմյերիտմիության կատարած դերի հետ։

Ընկ. Ստալինի նամակը մեր ամբողջ կուսկազմակերպության առջև խնդիր է դնում՝ ուսումնասիրել կուսակցության պատմությունը և Լենինի ու բոլշևիկների դերն այն պայքարում, վորը մղվում է յերկու ճակատում, տրոցկիստական հակահեղափոխության, տրոցկիստական մաքսանենգների ու նեխված լիբերալիզմի և նրանց նկատմամբ հաշտվողականության դեմ։ Ուսումնասիրելով հանդերձ կուսակցության պատմությունը, անհրաժեշտ է պրոպագանդիստական մեծ աշխատանք ծավալել տնտեսական շինարարության խնդիրների ուսումնասիրման գործում, դիալեկտիկական մատերիալիզմի և Մարքսի քաղաքական տնտեսության հարցերի ուսումնասիրման ասպարեզում, մերկացնելով մենշևիկյան իդեալիզմը, մեխանիստների, ռուբինշչինայի և լենինիզմի խորթ իդեոլոգիականների հակալենինյան հայացքները։

## ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոնֆերանսն արձանագրում է, վոր չնայած վերադաս քաղօրգանների մի շարք վորոշումներին և կտրուկ դիրեկտիվներին, անհրաժեշտ բեկում չենք ստեղծել կոմյերիտմիության ղեկավարման ասպարեզում։ Անբավարար, իսկ տեղ-տեղ շատ թույլ են իրականացվում բջիջների քարտուղարների այն վորոշումները, վորոնք վերաբերում են կոմյերիտմիության ղեկավարմանը։

Կոմյերիտմիությունը մեծ աշխատանք է ծավալել կուսակցության հիմնական գծի համար, բոլոր թեքումների դեմ մղվող պայքարում, հա-

կահեղափոխական Դաշնակցության իդեոլոգիայի և պրակտիկայի դեմ մղվող պայքարում: Ամբողջ դիվիզիայում Կոմյերիտմիությունը կազմում է 50 տոկոս: Զորամասերում մենք ունենք բոլշևիկյան խանդավառության և համառության լավ օրինակներ այն աշխատանքում, վորը կատարում է Կոմյերիտմիությունն իր շարքերն ամրացնելու և մարտական պատրաստությունը բարձրացնելու համար: Վերջին յերեք ամսում դիվիզիայի զորամասերում մենք ունենք 12 կոմյերիտական բջիջ՝ առանց վորևէ կարգապահական զանցանքի:

ՊՈՒՌ-ի այն դիրեկտիվը, վոր պահանջում է բոլոր բանվորներին և բատրակներին 100 տոկոսով ներգրավել Կոմյերիտմիության շարքերը, անցյալ տարի հիմնականում կատարվել է: Ընթացիկ ուսումնական տարում պետք է լրիվ իրականացնել այդ դիրեկտիվը, նկատի ունենալով, վոր մենք մեծ ավյալներ ունենք Կոմյերիտմիության աճման ասպարեզում, վոր զորամասերում համապատասխան բազա ունենք այդ աճման համար:

Կոնֆերանսը կոչ է անում դիվիզիայի կուսկազմակերպությանը՝ մոտ ապագայում վճռական բեկում ստեղծել Կոմյերիտմիության կուսակցական ղեկավարումն ուժեղացնելու գործում՝ բջիջների քարտուղարների խորհրդակցության վորոշումների հիման վրա:

## ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասսայական քաղաքական աշխատանքը, հանդիսանալով կուսակցական քաղաքական աշխատանքի վճռական բնագավառը, շարունակում



է յետ մնալ և չի դրված ժամանակակից պահանջների ու խնդիրների մակարդակի վրա: Այդպիսով դեռևս ամենօրյա ծավալուն պայքար չի մղվում մարտական ուսուցման բարձր վորակի համար:

Մասսայական աշխատանքի բոլոր տեսակների և ձևերի միջոցով չի կենտրոնացված կարմիր բանակային հասարակայնության ուշադրությունը տեխնիկայի պրոպագանդի ու յուրացման խընդիրների վրա, հրամանատարական ուսման խնդիրների վրա (83 խմբակներից ռազմական և ռազմական-քաղաքական բնույթ ունեցող խմբակները կազմում են 16 տոկոս, 80 հավաքներից և կոնֆերանսներից հրաձգայինները կազմում են 17 տոկոս, 198 մրցություններից հրաձգային մրցությունները կազմում են 9 տոկոս):

Մարտական պատրաստության և գյուտարարության ու ռացիոնալացման հարցերը մեր ամենաթույլ բնագավառն են կազմում: Այդ հարցերը բավականաչափ սուր ձևով չեն դրված կարմիր բանակայինների մասսայի և պետկազմի առջև (մի տարվա ընթացքում այդ աշխատանքին դիվիզիայից մասնակցել են 36 հոգի. մտցվել են 86 առաջարկ, ընդունվել են 81 առաջարկ):

Սոցմրցման ու հարվածայնության ծավալման ասպարեզում մեր էական թերություններն են՝ սոցմրցման արդյունքների թույլ հաշվառումը, պայմանագրերի ամենօրյա ստուգման բացակայությունը, կեղծ հարվածայինների թույլ հայտաբերումը և նրանց դեմ մղվող թույլ պայքարը:

Զորամասերի քաղապարատները և կուսկազ-

մակերպությունները դեռևս չեն սովորել ղեկավարել օպերատիվ կերպով, օգտագործել մասսայական աշխատանքի բոլոր լծակները՝ մոբիլիզացիայի յենթարկելու կարմիր բանակային մասսայի ակտիվությունը, խանդավառությունն ու ստեղծագործական ուժերը՝ կուսակցության լոզունգների և մարտական պատրաստության խնդիրների շուրջը, թերությունների և ճեղքվածքների վերացման ու կանխման շուրջը: Ակումբները և գրադարանները մինչև այժմ էլ հայտաբերում են դանդաղաշարժություն:

Մասսայական աշխատանքը դեռևս վճռական տեղ չի գրավել «ԱՌԱՆՑ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԶԱՆՑԱՆՔԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՅԵՎ ԶՈՐԱՄԱՍ» լոզունգի համար մղվող պայքարում: Թույլ են մասսայականացվում այն մարտիկները և ստորաբաժանումները, վորոնց լավագույն արդյունքներն են ձեռք բերել կարգապահության ասպարեզում:

ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե.— Վճռաբար բարձրացնել ամենօրյա կոնկրետ կուսղեկավարությունը մասսայական աշխատանքում: Կազմակերպել կոնկրետ օգնություն (ակումբներին և լենանկյուններին կուսբյուրոների և բջիջների կողմից: Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում հատուկ ուշադրություն հրավիրել մասսայական աշխատանքի վորակի բարձրացման վրա: Անհրաժեշտ է, վոր պետկազմը հատուկ ուշադրություն նվիրի սոցմրցման և հարվածայնության ղեկավարությունն ուժեղացնելու հարցերին, հաշվառմանը, պայմանագրերի ստուգմանը, կեղծ հարվածայնության դեմ մղվող պայքարին: Քաղապարատները և կուսկազ-



մակերպությունները պետք է ավելի լայն օգտագործեն ուսուցման պլանների համար մղվող պայքարի դրական օրինակները, ավելի մեծ ուշադրություն նվիրեն սոցմրցման արդյունքների հաշվառմանը, ավելի շատ օգնեն պետկազմին՝ սոցմրցման ղեկավարմանը տիրապետելու գործում: Պետք է լրիվ ընդգրկել սոցմրցմամբ պետկազմին, օրինակելիություն հաստատել հրամատարական ուսուցման և մարտական պատրաստության ասպարեզում:

Անհրաժեշտ է վճռական պայքար մղել պլանն «ընդհանրապես» մարտիկին հասցնելու դեմ, ավելի լայն ծավալել խնդիրների լուսաբանումն ըստ շրջանների և տասնորյակների, ավելի օգտագործելով ցուցադրական պլակատները, օգնություն ցույց տալով ուսման մեջ յետ մնացող կարմիր բանակայիններին, լայն օգտագործելով քաղաշխատանքի տեխնիկական միջոցները (ռադիո, կինո, ֆոտո):

Մասսայական աշխատանքների գծով անհրաժեշտ է կենդանացնել, աշխուժացնել հասարակական կազմակերպությունների (ՊԱԶԸ–Ավիաքիմ, Ավտոդոր, Մարտնչող Անաստվածների Ընկ. և այլն) աշխատանքները:

## ՄԱՄՈՒԼ

Անցյալ տարվա ընթացքում զգալի հաջողություններ ենք ձեռք բերել մամուլի աշխատանքում: Բարելավվեցին բազմատիրաժ թերթերը: Դաշտային տակտիկական պարապմունքների և մանյովրների ժամանակ ավելի կանոնավորվեց և

կազմակերպվեց բազմատիրաժ թերթերի և խըլչովկաների հրատարակումը։ Ստորին մամուլը սովորեց կոնկրետաբար լուսաբանել մարտական ուսման ընթացքը, բարելավվեց այն օգնությունը, որը ցույց է տրվում հրամանատարությանը՝ զորամասի ստորաբաժանման մարտական պատրաստությունը բարձրացնելու ասպարեզում։

Մեր բացերը հետևյալներն են՝ մի շարք գընդային բազմատիրաժ թերթեր և վաշտային խըլչովկաները թույլ են տվել քաղաքական սխալներ, խեղաթյուրումներ և այլն։ Խմբկոլների աշխատանքում բավականաչափ օպերատիվություն չի յեղել, շատ թույլ է յեղել ընթղթակիցների մեջ տարվող աշխատանքը (առաջին, 2-րդ և 4-րդ գունդ, սակրավոր վաշտ, հեծյալ վաշտ)։

Բյուրոները և բջիջները բավականաչափ կոնկրետ և ամենօրյա ղեկավարություն չեն ցույց տվել մամուլին։

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է.— Ուժեղացնել կուսակցական ղեկավարությունը մամուլի նկատմամբ, ավելի լայն ծավալել մեր պայքարը հրամանատարներ և նախաձեռնող մարտիկներ դաստիարակելու համար, ավելի լայն գործադրել ստուգումն ու հաշվածայնությունը, բարձրացնել զինվորական կարգապահության բարձր օրինակների համար մղվող պայքարը։

Անհրաժեշտ է վճռական և անողոք պայքար մղել կուլակային և դաշնակ ագիտացիան յերեվան հանելու և մերկացնելու համար, նացիոնալիստական տրամադրությունների դեմ, կուսակցության հիմնական գծից կատարված բոլոր թեքումների դեմ։



«Կարմիր Զինվորը» կիպ մոտեցնել տեխնիկային տիրապետելու գործին։ Նա սկսել է ավելի լայն պայքարել զինվորական յերկաթե կարգապահություն ստեղծելու, հաստատակամ հրամանատարներ և նախաձեռնող մարտիկներ դաստիարակելու և կուսակցության հիմնական գծի պրոպագանդի համար։

Կոնֆերանսը միաժամանակ մատնանշում է, վոր դեռևս լրիվ չեն սպասարկված կարմիր բանակայինների և կրտսեր հրամկազմի պահանջները, բավարար հիմքի վրա չի դրված մեթոդիկ ցուցումներ տալու գործը, «Կարմիր Զինվորի» էջերում բավականաչափ չեն լուսաբանվում ստորին մամուլի խնդիրները։

ՎԵՐԵՎ ՄԱՏՆԱՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՈՆՖԵՐԱՆՍՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀԱՄԱՐՈՒՄ «ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐԸ» ՎԵՐԱԾԵԼ ԱՄԵՆՕՐՅԱ ԹԵՐԹԻ։ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է, ՎՈՐ «ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐԸ» ԲԱՅԼՇԵՎԻԿՈՐԵՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԻ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԵՆ ԼՐԻՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ։

Հայերեն ռազմաքաղաքական գրականություն հրատարակելու ասպարեզում ձեռք են բերված մի շարք նվաճումներ (Պետհրատին կից կազմակերպվել է Ռազմական բաժին, կազմվել է հրատարակչական պլան և հրատարակվել են մի շարք նյութեր)։ Սակայն կոնֆերանսը մատնանշում է, վոր հրատարակչական աշխատանքը դեռևս յետ է մնում (դանդաղկոտություն, քաղպարապմունքների, կուսլուսավորության և այլ

նյութերի վոչ ժամանակին հրատարակումը հայերեն):

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ամեն միջոց ձեռք առնել հրապարակելու հայերեն անհրաժեշտ նյութեր՝ զորամասերին ժամանակին ուսումնական գրականություն հայթայթելու համար:

Ծավալուն բոլշևիկյան ինքնաքննադատությամբ մերկացնելով մեր գործնական աշխատանքում գոյություն ունեցող թերությունները և մատնանշելով Փաղբաժնի, զորամասերի քաղապարտաների և կուսակազմակերպությունների աշխատանքներում ձեռք բերված նվաճումները, կոնֆերանսը կոչ է անում դիվիզիայի ամբողջ կուսակցական կազմակերպությանը՝ բոլշևիկյան տեմպ ծավալել մեր կուսակցության հիմնական գծի կիրառման ասպարեզում, այն անողոք և վճռական պայքարում, վոր մղվում է ընդդեմ գլխավոր վտանգ աջ թեքման, «ձախ» ոպորտունիզմի, ընդդեմ աջ-«ձախ» խոտորումների և նրանց նկատմամբ ցուցաբերվող հաշտվողականության և յերկերեսանիության դեմ, հակահեղափոխական տրոցկիզմի, տրոցկիստական մաքսանենգների և նեխված լիբերալիզմի տեսությունների և պրակտիկայի դեմ:

Շարունակել անդուլ և աննկուն պայքար մղել ազգային հարցում գոյություն ունեցող թեքումների դեմ, ջախջախիչ հարված կազմակերպելով դաշնակների և կուլակության փորձերին՝ ազդելու զորանոցի վրա:

Կոնֆերանսը կոչ է անում բոլոր կուսկազմակերպություններին՝ բոլշևիկորեն մոբիլիզացիայի յենթարկել կարմիր բանակայինների և պետկազմի ուշադրությունը՝ ջախջախիչ հարված տալու նացիոնալիստական տրամադրություններին հանուն մեր շարքերի ինտերնացիոնալ համախմբվածության, լենինյան ազգային քաղաքականության բոլշևիկյան կիրառման:

Կոնֆերանսը կոչ է անում ամբողջ կուսկազմակերպությանը՝ բոլշևիկյան համառությամբ մարտնչել մարտական պատրաստությունը բարձրացնելու, կուսակցության հիմնական գիծը հըստակորեն կիրառելու համար, լենինիզմի անաղարտության համար:

---

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ 10 ՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԲԱՆԱՁԵՎԸ ԴԻՎԿՈՒՍՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Լսելով դիվկուսհանձնաժողովի հաշվետու զեկուցումը, 10-րդ դիվիզիայի կուսկոնֆերանսը, հանձնաժողովի հաշվետու շրջանում կատարած աշխատանքները համարում է բավարար և տարած կուս. քաղաքական գիծը ճիշտ:

Կոնֆերանսը նշում է՝

Դիվիզիայի կուս. կազմակերպությունները աճել ու ամրացել են գաղափարապես, եւ ավելի համախմբելով վողջ կարմիր բանակային մասսային կուսգլխավոր գծի շուրջը, միաձույլ շարքերով անողոք պայքար են մղել աջ օպորտունիզմի վորպես գլխավոր վտանգի՝ ներկա շրջանում, «ձախ» խոտորումների և նրանց նկատմամբ հաշտվողականների դեմ, հակահեղափոխական տրոցկիստական կոնտրաբանդիստների և նեխված լիբերալիզմի դեմ:

Դիվիզիայի կուսկազմակերպությունները անհաշտ պայքար են ծավալել մեծապետական շովինիզմի, վորպես գլխավոր վտանգի, տեղական նացիոնալիզմի, հակահեղափոխական դաշնակցական գաղափարախոսության դեմ և այդ անհաշտ ջախջախիչ պայքարի հիման վրա, նրանք եւ ավելի յեն ամրացրել կուսկազմակերպության միաձուլությունը և վողջ կարմիր բանակային մասսայի ինտերնացիոնալ կոփվածությունը:



Կուսկազմակերպությունները ավելի բարձր վորակով մասսայականացնելով ընկ. ՍՏԱԼԻՆԻ պատմական ու քաղաքական խոշոր նշանակություն ունեցող նամակը, պետք է կուս. և կոմյերիտ մասսային դաստիարակեն լենինյան բոլշևիկյան պայքարի պատմության թեորիայով և պրակտիկայով, բարձրացնելով նրանց զգոնությունը հակահեղափոխական տրոցկիզմի գաղափարախոսության նկատմամբ և ամեն մի հայտաբերած բացասական, պրոլետարիատին խորթ տրամադրությանն ու արտահայտությանը տան անողոք ջախջախիչ հարված: Պայքարելով տրոցկիստական հակահեղափոխական կոնտրաբանդիստների և նեխված լիբերալիստների դեմ, եւ ավելի պետք է ուժեղացնել կուսկազմակերպությունների գաղափարական դաստիարակչական բոլշևիկյան զգոնությունն ու նրանց անողոք վերաբերմունքը դեպի դաշնակցական գաղափարախոսությունը:

Դաշնակցության իդեոլոգիայի արտահայտությունների դեմ պայքարի գործում կուս և ԼԿԵՍՄ բջիջները պետք է խնդիր առաջադրեն և հասնեն նրան, վոր «վոչ մի կարմիր բանակային չպետք է լինի, վորը չիմանա Դաշնակցության կուսակցության դասակարգային էությունը, վորպես իմպերիալիստների գործակալի և հայ աշխատավորության վոխերիմ թշնամու թե ան-

ցյալում և թե ներկայումս (9-րդ կուսկոնֆերանսի վորոշումներից)։

Հակահեղափոխական տրամադրությունների ժամանակին հաշվառման և նրանց դեմ պայքար մղելու հետ միասին պետք է կարմիր բանակային մասսային բացատրել Անդրկովկասի ֆեդերացիայի նշանակությունն ու էությունը, նրա խնդիրները և մեր առորյա քաղաքականությունը կապված ազգային լենինյան քաղաքականության հետ։ Դիվիզիայի կուսկազմակերպությունները իրագործելով Համկոմկուսի ԿԿ-ի հոկտեմբերի 31-ի պատմական վորոշումը, վճռական հարված են հասցրել ատամանշչինայի ելեմենտներին և իմբակայնությանը։

Կոնֆերանսը խնդիր է առաջադրում կուսկազմակերպություններին ավելի խորացրած կերպով իրացնել ԿԿ-ի վորոշումը (հոկտեմբերի 31-ի 1931 թ.) ծավալելով անխնա պայքար գյուղական հարցում կատարված սխալներն ուղղելու համար։ Բարձրացնել կուսկազմակերպությունների գաղափարական դրությունը, տալ բոլշևիկյան կոփվածություն. ամեն մի կոմունիստ ակտիվ պայքարող պետք է լինի կուսակցության գլխավոր գծի համար։

## ԱՊԱՀՈՎԵԼ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ

Կոնֆերանսն արձանագրում է, վոր կուսկազմակերպությունները յերեսները դարձնելով



դեպի մարտական ուսուցումը, վորոշ չափով բարձրացրել են կոմունիստների որինակելիությունը։ Սակայն դեռ կան կուսբջիջներ, վոր չեն իրագործել տակավին բջիջների քարտուղարների 3-րդ համաբանակային խորհրդակցության վորոշումները, վոր պահանջվում է բոլոր կոմունիստներից և կոմյերիտականներից լինել իսկապես առաջավորը մարտական ուսուցման բոլոր բնագավառներում, տեխնիկայի տիրապետման ու խնամման գործում։

Անհրաժեշտ է, վոր բջիջները համապատասխան հրամատարի միջոցով կուս և կոմյերիտ ընկերների առաջադիմության հաշվառումը կատարեն, ուսուցման գործում օգնություն ցույց տալով թույլ ընկերներին և կուսակցական գծով ազդել ընկերների վրա վերացնելու իրենց բացերը։ Այդպիսով հնարավոր կլինի (հաշվառման միջոցով) իմանալ ամեն մի կոմունիստի կոնկրետ թերությունը և այդ թերությունը վերացնելու միջոցներ ձեռք կառնվեն, վորով ապահովված կլինի կուս և կոմյերիտ ընկերների որինակելիությունն ուսուցման և քաղաքական պատրաստության բոլոր բնագավառներում։

Կուսկազմակերպությունները տակավին լրիվ կերպով չեն ապահովել կուս. ընկերների որինակելիությունը պետկազմի ուսուցման գործում։ Կուսհրամատարները պետք է առաջավորները լինեն պետկազմի ուսուցման մեջ։ Այս պահանջն իրականացնելու համար կուսբյուրոները և բջիջները պետք է միջոցներ ձեռք առնեն, պետք է ստեղծեն պայմաններ հաստատակամ հրամատար

ունենալու համար: Չպետք է ծանրաբեռնել նրանց զանազան աշխատանքներով, այլ հնարավորություն տալ ինքնապատրաստվելու:

Սոցմրցակցության գործում ունենք բավական հաջողություններ, սակայն վորոշ կուս և կոմյերիտ ընկերների կողմից դեռևս նկատվում է կեղծ հարվածայնություն, սոցմրցակցության պայմանագրերը մի շարք դեպքերում կրում են փորմալ բնույթ և առանց վորակի յեն:

Բջիջներն ամենախիստ պատասխանատվության պետք է կանչեն մարտական ուսուցման թափերի նկատմամբ ոպորտունիստական տրամադրություններ արտահայտողներին, վորոնք անիրագործելի յեն գտնում Հեղափոխական Ռազմական Խորհրդի պահանջները և բոլշևիկորեն չեն լարում իրենց ուժերը կենսագործելու համար առաջադրված խնդիրները:

Կուսբյուրոները և բջիջները պետք է վճռական լինեն այն կոմունիստների նկատմամբ, վորոնք սիստեմատիկ խախտումներ են կատարում. դրա հետ միասին խոշոր ուշադրություն պետք է դարձնել կուս և կոմյերիտական ընկերների դաստիարակման վրա, նպատակ ունենալով կանխելու նրանց հանցանքները և նրանց հասկացնել տալու այդ խնդրի կարևորագույն քաղաքական նշանակությունը և վոր նրանք պետք է լարեն իրենց ուժերը կարգապահության մեջ լինելու օրինակելիներ:

Բջիջները պետք է ամեն մի առանձին խախտման դեպքին ունենան կոնկրետ մոտեցում և ոժանդակեն ուղղելու կարգապահության քաղա-



քականության ասպարեզում թույլ տրված խեղաթյուրումները: Պետք է իրականացնեն «առանց կարգապահական զանցանքի զորամաս» լոզունգը:

## ԿՈՒՍԱՃՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Դիվիզիայի կուսկազմակերպություններն աճել են բանվոր, բատրակ, առաջավոր կոլխոզնիկ և հարվածային հրամատարներով ու կարմիր բանակայիններով:

Աճել է ձգտումը դեպի կուսշարքերը: Այս ընդհանուր հաջողությունների հետ միասին կան անթույլատրելի բացեր, վորոնց միակ պատճառը կուսբյուրոների և բջիջների կողմից աշխատանքների վոչ լրիվ վերակառուցումն է: Ունենք վորակական վորոշ հաջողություն՝ 1931 թ. 62,3 տոկոս բանվոր, բատրակ 1930 թ. 59,3 տոկոս. սակայն քանակով յետ է մնում ընդունվածների թիվը 1931 թ. ընդունվածներ—690, 858-ի դիմաց (30 թ.):

Բջիջներում դեռ չկա ճիշտ հասկացողություն կուսաճման պահեստի հաշվառման մասին: Չի տարվում նրանց հետ սիստեմատիկ աշխատանք նրանց նախապատրաստելու կուսշարքերն ընդունելու համար: Անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր բանվորներին, բատրակներին և առաջավոր կոլխոզնիկներին, նրանց մասնակից դարձնել կուսպրոս ցանցին, կատարել անհատական կցումներ և մասնակից դարձնել պրակտիկ աշխատանքներին, իրագործելով բջիջների քարտուղարների խորհրդակցության վորոշումն այս մասին, վոր

«կուսկազմակերպությունները պետք է ուժեղացնեն իրենց աշխատանքները կուսշարքերի աճման ասպարեզում, կուսակցության մեջ ընդգրկել քաղաքականապես ակտիվ, կարգապահության մեջ օրինակելի, մարտական ուսուցման գործում հարվածային, արդյունաբերական գյուղատնտեսական բանվորներից և առաջավոր կոլխոզնիկներից»:

Հաշվառման և անհատական ուսումնասիրման միջոցով հնարավոր կլինի վերջ տալ ոպորտունիստական ինքնահոսին և պլանաչափ կերպով աճեցնել կուսկազմակերպությունների շարքերը:

Ցերկրային զորամասերի կուսկազմակերպությունները, բացի կադրային մասից պետք է ընդգրկեն լավագույն բանվոր, բատրակ և առաջավոր կոլխոզնիկ փոփոխիկներին պատրաստելու նրանց կուսշարքերը մտնելու համար, կանոնավորելով նրանց գործերը տեղական կուսկազմակերպությունների միջոցով:

Կուսբջիջների ղեկավարությամբ կոմսոմոլի բջիջները պետք է մաքսիմալ չափով աշխատանք տանեն իրենց անդամներին կուսակցության շարքերը հանձնելու համար պատրաստության գործում:

## ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՅԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Բջիջները և բյուրոները տակավին պատշաճ չափով ուշադրություն չեն դարձրել կուսթեկնածուների բոլշևիկյան դաստիարակման խնդրի



վրա, նրանց մարքս-լենինյան դաստիարակության վրա: Բացի կուսլուս. դպրոցներից, նրանց իրազեկ պետք է պահել կուսակցության առօրյա հրատապ խնդիրների մասին և նրանց ներգրավել պրակտիկ աշխատանքի մեջ, մինչդեռ մեր բջիջներում կուսթեկնածուներն իրենց մեծամասնությամբ չունեն կուսպարտականություններ: Տեղի յեն ունենում թեկնածուներին ժամանակին անդամ փոխադրելու ձգձգումներ և ժամանակին չեն վերացվում այդ ձգձգումների պատճառները:

Բյուրոների կազմակերպիչները դեռևս թույլ են աշխատում կուսաճման և փոխադրման գործում: Բջիջներին չեն օգնում, կոնտրոլի չեն յենթարկում նրանց աշխատանքը, թեկնածուներին բոլշևիկյան դաստիարակություն տալու և նրանցից կոփված բոլշևիկներ դարձնելու համար:

## ԿՈՄՍՈՄՈԼԻ ԱՃՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կոմսոմոլի կազմակերպությունները չեն իրագործել 9-րդ համագումարի վորոշումը բանվորներին 100 տոկոսով ընդգրկելու մասին, անհրաժեշտ է, վոր կուսբջիջներն ուժեղ ղեկավարություն ունենան ԼԿՅԵՄ-ի բջիջների վրա, նրանց աշխատանքն ավելի աշխուժացնելու, բոլոր բանվորներին ԼԿՅԵՄ-ի շարքերը ներգրավելու, լայն կերպով ընդգրկելու կոլխոզնիկներին և առաջավոր ստուգված անհատ չքավորներին ուսուցման մեջ հարվածայիններին: Դրա հետ միասին պետք է զգոն լինել, վորպեսզի ԼԿՅԵՄ-ի շարքերը չխցկվեն դասակարգային խորթ տարրեր,

ժամանավանդ Դաշնակցության յերիտմիության թափթփուկները, վորոնք ամեն ջանք գործ են դնում խցկվել ԼԿՑԵՄ շարքերը:

## ԿՈՒՍ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Կուսբջիջների աշխատանքներում տակավին գոյություն ունեն խոշոր բացեր թե նրանց դաստիարակման և թե ղանցանքների կանխման գործում: Դեռ խոշոր չափով տույժերի յեն յենթարկվում փոխանակ հիմք ընդունելով կուս ընկերների սխալները ժամանակին իմանալը և նախազգուշացնելը: Սխալը թողնվում է այնքան, վոր վերջում ստիպված են լինում դիմել կազմակերպչական խիստ միջոցների:

Կուսակցության գլխավոր գծի անցկացման, մարտական ուսուցման պլանների կատարման և այլ կուսակցական հիմնական խնդիրներում ծավալված է յեղել ինքնաքննադատությունը, վորի հիման վրա կուսկազմակերպությունները ձեռք են բերել զգալի հաջողություններ, սակայն կաբևոր բացն այն է, վոր վորոշ տեղերում ինքնաքննադատությունը ծավալված չի յեղել մարտական ուսուցման մեջ ոպորտունիստական արտահայտությունների դեմ, այն ընկերների վերաբերյալ, վորոնք դեպի մարտական ուսուցումը հայտաբերել են անպատասխանատվություն և թերահավատ վերաբերմունք:

Վորոշ օղակներում յեղած ինքնաքննադատության ճնշման դեպքերի դեմ չի տարվել անողոք պայքար, ինչպես օրինակ՝ բանթղթակիցների ուղղակի կամ անուղղակի կերպով սպառնալու դեմ, ժողովում հնարավորություն չտալ ինքնաքննադատելու և այլն:



Կուսակցական հանձնաժողովը, բյուրոները ու բջիջները պետք է ել ավելի վճռական պայքար ծավալեն ինքնաքննադատության ամենաչնչին ճնշումների դեմ, ել ավելի ուժեղացնել ինքնաքննադատությունը կուսակցության ու մարտական քաղաքական ուսուցման խնդիրների շուրջը:

Դիվկուսկոնֆերանսն առաջարկում է կուսհանձնաժողովին ուժեղացնել պայքարը կուսակցության գծի բոլոր թեքումների դեմ, յերեսը դարձնելով դեպի մարտական ուսուցման գործն, իր աշխատանքը մոտեցնի զորամասերին, աջակցելով նրանց աշխատանքներին և ուժեղացնելով կոնտրոլը:

# ՑԱՆԿ

ԲԱՆԱՁԵՎ Հ. ՀԲ. ԴԻՎ. ՏԱՍՆԵՐՈՐԴ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ


| | |
|---|---|
| | Եջ |
| Հրամատարական ուսուցում | 8 |
| Զորքերի տակտիկական պատրաստության ասպարեզում | 11 |
| Հրաձգային պատրաստություն | 12 |
| Ֆիզիկական պատրաստություն | 13 |
| Կարգապահության վիճակը | 14 |
| Զորակոչը | 15 |
| Ցերկրային աշխատանքը | 16 |
| Պլանավորումը | 17 |
| Կուսբյուրոների և բջիջների աշխատանքի վերակառուցումը | 18 |
| Հաշվառու և կուսակցական քաղաքական ինֆորմացիա | 20 |
| Կոլտնտեսական պրոպագանդի վիճակը | 20 |
| Քաղպարապմունքները | 21 |
| Կուսակցական լուսավորություն | 23 |
| Կոմյերիտմիության ղեկավարությունը | 25 |
| Մասսայական աշխատանք | 26 |
| Մամուլը | 29 |
| ԲԱՆԱՁԵՎ ԴԻՎԿՈՒՍՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ | 34 |
| Կուսանման գործում | 35 |
| Ապահովել կոմունիստների որինակելիությունը | 36 |
| Թեկնածուների պատրաստման և փոխադրման գործում | 40 |
| Կոմսոմոլի անման բնագավառում | 41 |
| Կուսընկերների դաստիարակման խնդիրները | 42 |

2230

Гос. Публ. Библиотека
ՀԽՍՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0218677

41. 275

РЕЗОЛЮЦИИ ДЕСЯТОЙ ПАРТКОНФЕ-
РЕНЦИИ АРМЯНСКОЙ СТР.
ДИВИЗИИ